

373

---

7-82



3.1(91.542)

-82

0120-10

Գրեց . Պոլևսուցի

# ՔՕՂ ԱԶԵՐԵՈՒՄ

ԿԱՄ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱԶԳ. ՎԵՐՋԻՆ ԱՆՅՈՒԴԱՐՁԵՐԸ



## 1913

ՏՐԱՊԻԶՈՆ

ՏՊԱՐԱՆ Ե. ՄԻԲՈՒՆԻ



300 ԲՐԱՋԵՐԾՈՒՄ

58 24 1210

1580-110

373

կամ

Պ-88 Տրապիզոնի Ազգ. վերջին անցուդարձերը

Շատ հեշտ է ամէն առիթով, ըլլայ ղրազրութեան, ըլլայ բանախօսութիւններու մէջ, յեղեղել ու կրկնել թէ՛ մենք զոհներ մեր ազգային կործանարար թերութիւններուն, թէ՛ մենք ենք մեր ողբալի յետամնցութեան միակ պատճառը, թէ՛ մենք իսկ ենք մեր անգութ գերեզմանափորը:

12339

Շատ հեշտ է այսպէս խօսիլ ու կրկնել և սակայն, ահա այսօր Տրապիզոնի մէջ դործբով ապացուցինք որ մենք մի միայն տեսականով կը բաւականանանք ու յաւէտ զոհներ աւերիչ կիրքին, որ եղաւ ոտնահարել մեր ազգային Սահմանադրութիւնն ու տեղական կրթական դործը այս երկու հաւասարապէս սիրելի նուիրականութիւնները:

Տեսչի աննշան խնդիր մը պատրուակ և աշակերտութիւնը դործիք դարձուելով, անձնական գձուձ և կուսակցական նեղմիտ հաշիւներով, զբոյրոցը քար ու քանդ եղաւ, ասիկայ այլ եւս բացայայտ է: Բացայայտ է նաև թէ՛ առաջնորդարանը տակն ու վրայ եղաւ ու ազգը խայտառակուեցաւ օտարներու առջև: Դէպքերը խեղաթիւրուելով շա-

հազորժուեցաւ ժողովրդին անտարբերութիւնն ու միամտութիւնը և յագուրդ տրուեցաւ բմահաճոյքին :  
Ու ժողովուրդը խաղացուած խաղերէն անտեղեակ մնաց :

Իրերայաջորդ դէպքերը պարզօրէն ցոյց տուին արդէն թէ՛ ամբողջ տիրանալու անխիղճ տենչանքը կոյր քինախնդրութիւնն ու վառասիրութիւնը չխնայելով ո՛չ մէկ նուիրականութեան , ի՛նչ աղետալի աւերներ կրնան գործել , սակայն որպէս զի ժողովուրդը մինչև վերջը անգիտակ չմնայ ու տեղեկանայ բուն իրողութեան և միանգամայն մերկացուին բոլոր այն խեղաթիւրումներն ու ստութիւնները և մութին մէջ դարբնուած ու գործուած մեքենայութիւնները, մենք պիտի պարզենք յետագայ սողերով դպրոցական և յարակից խնդիրները և իրադարձութիւնները իրենց ամէն մանրամասնութեամբ :

Տրապիզոնի աղդ . վարժարանը որ անցեալին մէջ կարող տեսուչներ ունեցած էր , ներկայ 1912-1913 կրթական շրջանին , այդ կողմէն չատանբաղդ եղաւ : Անցեալ Սեպտեմբերին տեսուչութեան պաշտօնին կոչուեցաւ Գարեգին Յովհաննէսեան 120 ոսկի տարեթոշակով և 10 ոսկի ճանապար-

հաճախով : Բայց նախ ծանօթացնենք ժողովուրդին թէ՛

Ո՞վ է այս մարդը

Գարեգին Յովհաննէսեան , բուն մականունով Առապաճեան , բնիկ Ալէքսանդրապոլցի է և Գէորգեան ձեմարանէն կիսաւարտ , թէև ինք իբրև ձեմարանաւարտ ներկայացած է հոս : Ուսուցչութիւն ըրած է Բաթումի և Թէհրանի նախակրթարաններուն մէջ : Միջոց մը Բարիկ մնացած է և այս առիթով դարձեալ հոս ներկայացած է իբրև համալսարանական , առանց սակայն ուէ վկայականով ապացուցանելու :

Հոս գալէ առաջ մէկ տարի Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանի տեսուչութիւնը վարած է , ուր իր միամտայ պաշտօնավարութեամբ սոսկալի կերպով խառնակած է վարժարանը և պատճառ դարձած Սասունցի որբերու և այլոց ճամբուելուն և ինք ալ իր յետադիմական և կռուազան ընթացքին ու կամակոր յամառութեան պաճառաւ հեռացուցուած է անկէ . վկայ այս մասին անցեալ տարի նոյնինքն Ալատամարտի մէջ զրուած մէկէ աւելի յօդուածները : Նոյն իսկ հոս պաշտօնի կոչուելու

նախօրեակին «Ազատամարտ», սա տողերը կը գրէր «կը լսենք որ իր ապիկարութեամբ Գարեգին Յովհաննէսեան Տօբթ. Տաղաւարեանի յանձնարարութեամբ գարձեալ տեսչական պաշտօնի կոչուեր է», Մենք դեռ ունինք ըսելիքներ իր ուսումն. կարողութեան մասին : Այժմ կ'անցնինք յաջորդական դէպքերը ներկայացնելու :

Տեսուչը պաշտօնի կոչումով էր նախորդ առժամեայ Ոսում. խորհուրդին կողմէ : Դասաւանդութիւնները սկսան Հ.կ. 1 ին : Մտաւ միւս մը աղջկանց վարժարանը զինուորներու բնակութեան յատկացուեցաւ և կանոնաւոր դասաւանդութեանց սկսուելէ վերջ, մասամբ կանոնաւոր ժողովներու չգոյութեան և առաւելապէս միտքերը քաղաքական և տնտեսական տաղնապներով զբաղած՝ վարժարաններու վիճակով մօտէն հետաքրքրուող չէ եղեր գրեթէ : Բայց երբ ժողովները կը վերակազմուին և 1912 Դեկտեմբերին վերջնապէս կարելի կը'լլայ Ուսումն. խորհուրդը կազմել՝ պր. Ս. Էթմէքեան, Մ. Պէննէսան, Ե. ՄալխասեանՄ, Խաչեան և Պ. Փիլոսեանէ բաղկացեալ, այն ատեն միայն կարելի կ'ըլլայ վարժարաններով մօտէն ըզնայիլ, ու այս օր ամենէն աւելի տեսուչը պաշտպանողն էն մին, խորհուրդին ատենապետ Պր. Ս.

Էթմէքեան, քանիցս վարժարան այցելելէ վերջ, առաջին անգամ ինք կը ներկայացնէ տեսչին Փրանսերէնի անկարողութիւնը, որմէ յետոյ է որ, ուրիշ երկու անգամներ, Պր. Պր. Մալխասեան և Պէննէսան՝ Պր. Ս. Թահմազեանի հետ, ներկայ կ'ըլլան տեսչին Փրանսերէնի դասերուն և կապչին իրենց տեսած քերականական, ուղղագրական, հնչումի, կապակցութեան և այլ բաղմապիսի այլանդակ սխալներէն՝ զորս կը հաղորդեն Ուսումն. խորհուրդին : Եւ որովհետեւ վարժարանին պատուին և աշակերտներու օգտին աեսակետով անկարելի էր աննկատ թողուլ այս պարագան, մանաւանդ որ վարժարանը պաշտօնապէս եօթնամեայ իտատի ճանչցուած էր, ուստի Ուսումն. խորհրդոյ մէջ քննութեան կ'առնուի խնդիրը : Բոլոր անգամները ինչպէս նաև նախագահը ի սկզբան անվերապահ կերպով և միաձայն համակարծիք կը գտնուին Տեսչին Փրանսերէնի անկարողութեան, որով խնդիր կ'ըլլայ դասերու փոփոխութեան : Տեսուչը տրամադիր էր առանց այլ և այլի համաձայնելու դասերու փոփոխման բայց Պր. Պր. Փիլոսեան և Էթմէքեան կը պնդին որ պէտք է դասերը այսպէս թողուլ մինչև տարիին վերջը. առարկայը թէ խնդիր կը ծագի, վէճ կը պատահի. Թ. Ինչ էր

այդ բառերուն թաղուն խմաստը, յետագայ դէպ-  
քերը զոյց տուին արդէն : Այսու հանդերձ Պր. Պր-  
էթմեքճեան և Փիլոսեան յանձնառու կըլլան դա-  
սերու փոփոխման մասին, Ուսումն. խորհրդոյ որոշ-  
մամբ, Տեսչին մտ յարմար տեսնուած ձեւով  
ձեռնարկն ընել :

Փետր. 8 ին Ուսումն. խորհուրդը իր բոլոր ան-  
դամներուն ներկայութեամբ կը քննէ խնդիրը և ա-  
շակերտաց անմիջական օգուտը ու վարժարանին  
պատիւը նկատի առնելով, մեծամասնութեամբ  
և իր նախագահին համամտութեամբ կորոչէն վեր-  
ջապէս, առնել նոյն դասերը տեսչէն եւ յանձնել  
վարժարանին կարող ուսուցիչներէն մէկուն :

Տեսուչը կը հրաւիրուի անադմուկ կեր-  
պով կարգադրելու համար խնդիրը, բայց այս վեր-  
ջինը յայտնապէս քաջալերուած ուսումն. խորհուր-  
դի մէջ ի նպաստ իրեն դոյացած հոսանքէն, ո՛չ իսկ  
կը բարեհաճի առաջնորդարան ներկայանալ, որով  
խորհուրդին որոշմամբ առաջնորդը գրաւորապէս  
կը ստիպուի հաղորդել արուած որոշումը, բայց  
այս անգամ ալ տեսուչը անամէջ առարկութիւն-  
ներով կը մերժէ գործադրել :

Այս հանգամանքներուն մէջ ուսումն. խոր-  
հրդոյ կեղմէ կը ներկայացուի բաղաք. ժողովին :

Այս վերջինը, ուսումն. խորհրդոյ հետ գումարած  
խառն նիստի մը մէջ, կը քննէ խնդիրը մանրամաս-  
նօրէն, կը լսէ խորհուրդին անդամները և անոնց  
բացակայութեան՝ տեսուչը առանձինն, և վերջնոյն  
բառացի յայտարարութիւններէն կը համոզուի և  
կուգայ այն եղբակացութեան որ, արդարեւ այս  
մարդը իր չղիտցած առարկային փոփոխման մասին  
եղած օրինական կարգադրութեան չհամակերպելի  
զատ, միջավայրին, ժամանակին ու պարագաներուն  
բողոքին անյարմար իր ինքնազուխ անօրէնութիւն-  
ներով, ու անտարբեր ընթացքով, Էրզ. Զրգ. դա-  
սարանի և ուրիշ կարգերու աշակերտաց ոմանց ծը-  
նողներուն գրաւոր և բերանացի խիստ բողոքներուն  
առիթ տուած և գանգատով ու վէճով զբաղեցուցած  
է առաջնորդարանը : Ասկէ զատ, տեսչի և ուսումն.  
խորհուրդի օրինական յարաբերութեանց մասին իր  
ուսեցած բոլորովին տարօրինակ ըմբռնումով ջա-  
նացած է միշտ վարժարանը հակակշռէ և հսկողու-  
թենէ հետու պահելու :

Բաղաք. ժողովը այս ամենուն վերահա-  
սու ըլլալէ վերջ, կը յորդորէ տեսուչը, ի սէր մա-  
նուկներու օգտին, համակերպիլ եղած կարգադ-  
րութեան և ի հարկին օրինաւորութեան սահմանին  
մէջ գիմել պատկանեալ ժողովներուն, առանց վէճ

յարուցանելու է կը յանձնարարէ նաև ուսումն . խորհուրդին զործադրել մեծամասնութեամբ արուած որոշումը , քանի որ այդպէս կը պահանջէր թէ՛ վարժարանին պատիւը և թէ աշակերտաց օգուտը և կատարել դասերու փոփոխութիւնը , որքան՝ կարելի է տեսչին արժանապատուութեան չդպրելու ձևով մը : Այս որոշման վրայ Ուսումն . խորհրդոյ երկու անդամները Պր . Պր . Ս . Էթմէքեան և Պ . Փիլոսեան փոխանակ ըստ ազգ . Սահմանադրութեան ենթարկուելու մեծամասնութեամբ արուած որոշման և արձանագրութիւնով բաւականանալու , կը հրաժարին : Եւ խնդիրը խեղաթիւրուած ձևով կը սկսի ներկայացուիլ ժողովուրդին : Տեսուչը իր կարգին չհամակերպիր դարձեալ և արուած որոշումը « յարանուրեան » արդիւնք ? ցոյց տալով նոր քննութիւն մը կը պահանջէ ու միւս կողմէ միջնորդներ կը սկսի տեղացնել առաջնորդարան : Պահանջուած քննութիւնը ո՛րքան ալ վիրավորիչ հանգամանք ունենար, Ուսումն . խորհուրդի նկատմամբ , այսուհանդերձ քաղաք . ժողովը արդարութեան պարտը կը համարի վերաքննութիւն մը կատարել տեսչին ֆրանսերէն դասերուն մասին : Այս խնդրոյն ծագումէն , այսինքն Յունվարէն ի վեր , տեսչին ուղղութիւնը եղած էր , ո՛րքան կարելի է , ձգձգել և

ժամանակ շահիլ : Այս անգամ ալ մէկ կողմէ քննութիւն կը պահանջէ ու միւս կողմէ հիւանդութեան պատրուակով վարժարանէ կը բացակայի եւ օրերը կ'անցնին : Վերջապէս պահանջուած քննութիւնը կը կատարուի և լիառատ փաստերով անգամ մըն ալ կ'ապացուցուի իր ֆրանսերէնի բացարձակ անկարողութիւնը :

Ահաւասիկ իր սխալներէն իբր նմոյշ մի քանին միայն

LES REFLEXIONS DE JEAN **Տեսուչը կը քարգնանէ ժակիկն անդրադարձութիւնները**  
 POLYTECHNIQUE — **Հոդագործական վարժարան**

ON NE PEUT PAS SE PASSER D'UNE SEULE GRAINE DE SEL

**Մարդ առանց աղի չկրնար կտապարուիլ**

BOUDER	—	ցասիել
MANGER A MÊME	—	նոյն իսկ ուտել
LEÇONS APPRISSES	—	յոկուած դասեր

**Գերակսեակաւ սխալներէն նմոյշներ**

<b>Տեսուչը կը գրէ</b>	ON CREUSENT	
> <b>կ'ըսէ</b>	A LA QUELLE CONJUGAISON	
> >	QU' EST - CE QU' IL FAUT - IL ?	
> <b>կը գրէ</b>	ÉCRIRE, PRECEDENT, GRAMMAIR	
<b>Տեսուչը կը գրէ եւ այլն</b>	ON PEUVENT ON DOIVENT	<b>եւ այլն</b>

Հնչումի սխառներ

Տեսուչը կապակցութեան (LIAISON) վրայ  
 դադարաւար չունի և երբեք կապակցութիւն չընենր.  
 այպէս IL EST ALLÉ կը կարգայ իրէ ալլէ. ON PEUT  
 AVOIR Օն քէօ ալիւաւո: TRENTE ( երեսուն ) կը  
 կարգայ Թռան. AIGUILLE, Էկվիլ. TERRIBLE, CAPAB-  
 LE, Թէոխարր, Բարասարր. BALAYER, պարայիէ,  
 BESOIN Պէզուէն:

Ըստ բաղդի մէջ բերուած այս քանի մը  
 սխառները, կը կարծենք որ բաւական են դադարաւար  
 մը տալու տեսչին ֆրանսագլտութեան մասին,  
 թէև քիչ մը ֆրանսերէնէ հասկըցող մէկը, կէս ժամ  
 իր ֆրանսերէնի ս'էէ դասին ներկայ դառնուելով,  
 շա՛տ աւելի անճոռնի սխառներու հաւաքածոյ մը  
 պիտի կրնար կազմել: Եւ սակայն այս մարդը  
 պաշտպանուեցաւ: Այ՛ս մարդը, որ ոչ իսկ հայերէն  
 գիտէ, ո՛չ իսկ երկու տող անսխալ հայերէն կրնա  
 գրել, ո՛չ իսկ թուաբանական պարզ խնդիր մը կըր-  
 նայ լուծել, իսկ իր ֆիզիքի ծիծաղելի դասերը և  
 հաւկիթ քրիսկացնէր ( կեղևով հաւկիթը առանց  
 կտորելու շիշին մէջ թխմել կուզէ ) չաքարէն ACIDE  
 CARBONIQUE պատրաստելու, նոյնքան ծիծաղելի փոր-  
 ձերը զորս մենք զանց քրինք յիշել իր ուրիշ շատ  
 մը սխառներուն կարգին, ոչ իսկ նկատի առնուեցան

և այսպիսի մէկը մինչև վերջը տեսուչ մնաց մարդ  
 մը որ դպրոցին մէջ տարիներէ ի վեր երգուած « Էին  
 փառաց », Արօթքը « Է՛յ ին փառաց », կը գրէր, ա՛յն  
 ալ Ս. Ստեփաննոսի տօնին Շէմնէտախնի յիշատակին  
 նուիրուած հանդէսի յայտագրին վրայ, զոր վերջին  
 պահուն ցրուելէ առաջ միայն կարելի կ'ըլլայ սըր-  
 բազրել: Սխառներու այս համառօտ մէջբերումէն  
 յետոյ դառնանք մեր նիւթին:

Կատարուած վերջին քննութեան  
 արդիւնքին համաձայն, քաղաք. ժողովոյ  
 կողմէ կը յանձնարարուի ուսումն. խորհուրդին  
 անպայման կատարել դասերու փոփոխումը: Ասոր  
 վրայ ուսումն. խորհուրդը պէտք եղածը կը հաղոր-  
 դէ տեսչին, բայց այս վերջինը այս անգամ ուրիշ  
 բողոքագրով մը, կատարուած վերաքննութեան  
 դէմ կը բողոքէ, ամենա անվայել լեզուով և կը  
 մերժէ տրուած որոշումը, ի հարկէ դուրսէն քա-  
 շալբուած: Ուսումն. խորհուրդը ստիպուած իրն-  
 դերը վերստին բարձր. ժողովոյ կը յղէ և այս մի-  
 շոցիս զբաղման պատճառով կը հրաժարի Պր. Մ.  
 Պէննէեան և այսպէսով կը կազմալուծուի նոյն խոր-  
 հուրդը:

Ուսումն. խորհուրդը կազմալուծուած և

ինդերը քաղաք՝ ժողովի օրակարգն անցած բլլա-  
 լով, այս վերջինը անդամ մընալ կը հրաւիրէ տե-  
 սուչը և կը յորդորէ համակերպիլ տրուած որոշման-  
 Բայց յիշեալը առաջին անգամ կը մերժէ առաջ-  
 նորդարան երթալ և երկրորդ հրաւերին պատաս-  
 խանելով՝ եղած յորդորը և տրուած որոշումը ան-  
 պայման մերժելէ զատ, բոլորովին անբնայտօրելի  
 և տարրական բարեկրթութենէ զուրկ ընթացքով  
 մը կը վարուի ու միանգամայն կը պահանջէ որ  
 զբաւորապէս հաղորդուի տրուած որոշումը և ո՛րեւէ  
 ըսուելիք ժողովին որոշմամբ Առաջնորդը պաշտօնա-  
 գրով մը զբաւորապէս կը հաղորդէ որոշումը, որուն  
 չպատասխաններ տեսուչը։ Երկրորդ պաշտօնագիր  
 մը կը գրուի, բայց տեսուչը առանց բանալու և  
 առանց կարգալու անտրդանքով ետ կը վերադար-  
 ճընէ ու կը մերժէ ճանչնալ այլևս ժողով, խորհուրդ,  
 Առաջնորդ, առաջնորդարան և ազգ. իշխանու-  
 թիւն։ Բաղաք. ժողովը վարժարանին և աշակեր-  
 տաց օգուտը և միւս կողմէ ազգ. իշխանութեան  
 պատիւը նկատի առնելով՝ ազգ. պաշտօնէի մը  
 այլևս աններելի ու դատապարտելի ընթացքին  
 հանդէպ չկրնալով տարբեր կերպով վարուիլ մարտ  
 19 ին կը պաշտօնանկէ տեսուչը։ Այս անգամ  
 քաղ. ժողովէն Վ. Մարանեան. և Բջւեան Է. Ֆ.

ները կը հրաժարին հետեւելու ուսումն. խորհուրդի  
 երկու անդամներու օրինակին. կարգ մը անիմաստ  
 առարկութիւններով ու յայանապէս գորավեղ կը  
 հանդիսանան ապօրինութեան և կը քաջալերեն  
 ազգ. իշխանութիւնը անարգող ստորագաս պաշ-  
 տօնեայ մը։ Այսպէսով քաղաք. ժողովը կը կորսնցնէ  
 իր օրինական մեծամասնութիւնը։ Բայց Առաջնոր-  
 զը տեսչին մասին տրուած որոշումը կը փութայ  
 գործադրել։ Տեսուչը սակայն չհպատակիր և ան-  
 սաստելով կը մտնայ վարժարան և աշակերտները  
 անկարգութեան ու ըմբոստութեան կ'աշխատի մղել։  
 Ասոր վրայ հարկ կ'ըլլայ որ Առաջնորդը կառավա-  
 րութեան միջոցաւ արգիլէ տեսչին վարժարան  
 մուտքը և այս վերջնոյն շաբաթական 4 ֆիղիք և 8  
 ֆրանսերէն ընդամենը 12 ժամ դասը կը յանձնէ  
 ստիպումով և դժուարաւ ուսուցիչ Պր. Պր Ա. Պալ-  
 եանի Ե. Ստեփանեանի և Նիլու-Յակոբեանի, որոնք  
 հակառակ 27-29 ժամ դաս ստանձնած ըլլալուն,  
 անձնուիրաբար եւ առանց փոխարինութեան կ'ըն-  
 դունին եղած առաջարկը։ Միջանկեալ ըսենք որ,  
 ի սկզբան երկէցս, կը հրաւիրուի նաև Պր. Գ. Կո-  
 զիկեան բայց յետոյ տեսնուելով որ տեսչին պաշ-  
 տօնանկմամբ բաց ֆնացած դասերէն ո՛չ մին իր  
 ճիւղերն են, երրորդ անգամ՝ զինք հրաւիրելու պէտք

չտեսնուիր : Այս պարագան կ'արձանագրենք ու կ'անձնինք առանց մեկնութեան :

Տեսչին պաշտօնանկումը Առաջնորդին կողմէ ուսուցչաց և աշակերտաց բերանացի հաղորդուելէն վերջ, ուսուցիչներէն Պր. Պ. Գ. Կողիկեան. Ն. Խտչեան Ի. Կրճիկեան և ուսուցչուհի Տիկ. Բ. Փիլոսեան ուսուցչական մարմինը աղջկանց վարժարանը կը հրաւիրեն և կ'առաջարկեն բողոքել տեսուչին չրաժարեցուցման դէմ, որ կը մերժուի մեծամասնութեան կողմէ : Ուսուցչական մարմինը կը հրաւիրուի Առաջնորդարան ուր պատճառները կրկին կը յայտարարուի տեսչին պաշտօնանկումը և կը յանձնարարուի հոգ տանիլ կարգապահութեան : Ուսուցիչ Պր. Գ. Կողիկեան հան կարգ մը խոսքերէ վերջ աշակերտական ըմբոստութեան մասին կառկած կը յայտնէ քողածածուկ կերպով սպառնալով : Եւ արդարեւ նոյն օրը ըմբոստութիւնը կը սկսի է բոլ. Գառարանէն : Սոյն ուսուցիչները, ի պաշտպանութիւն պաշտօնանկ տեսչին, կը պատրաստեն բողոքագիր մը, որ իրենց հետ կը ստորագրեն Պ. Ա. Բարեկենդանեան և մի քանի ուսուցչուհիներ միայն, սրմէ յետոյ Զ. բոլ և Ե. բոլ դասարանի աշակերտներն ևս կ'ըմբոստանան և կը հետեւին է. բոլ կարգի աշակերտներուն ընթացքին :

Ու կը սկսի վարժարանին մէջ ծայր տալ շտեմնուած տակն ու վրայութիւն մը, եւ անկուր ու աննախընթաց անարգանքի կ'ենթարկուին ուսուցիչ Պր. Պր. Ա. Պալեան, և Ստեփանեան, Ս. Կիւլ - Յակոբեան և Կ. Մաղմանեան մի միայն անոր համար որ, անձնուիրաբար և առանձ փոխարինութեան, տեսչին բաց մնացած դասերը ստանձնած և զայն պաշտպանելու համար ուսուցչաց սմանց կողմէ եղած ապօրէն փորձին չէին մասնակցած :

Վարժարանին հսկողները Ն. Խտչեան և Ի. Կրճիկեան, աշակերտները հանդարտեցնելու փորձ չընելէ զատ, ուղղակի և անուղղակի կը հրահրեն ինքիւրը և նոյն իսկ աշակերտաց ներկայութեան կը սկսին անարդել վերոյիշեալ ուսուցիչները ու քաջալերել յայպէսով ըմբոստ աշակերտութիւնը : Գարոյցին մէջ կարգապահութիւնը վերահաստատուելու համար Առաջնորդին ըրած փորձերն ալ ապարթիւն կ'անցնին և աշակերտաց կողմէ նախաւիրքով կը փոխարուինին ու անկարգութիւնը և անիշխանութիւնը զազաթնակէտին կը հասնի վարժարանին մէջ, իսկ դուրսը և միանգամայն վարժարանին մէջ վերոյիշեալ չորս ուսուցչաց դէմ հալածանքը և նախատինքը կը սաստկանայ մեծ չափով : Այս վեճակը երկու օր կը տևէ : Պաշտօնանկ տեսուչը կը

զիմէ Առասկան հիւպատոսին և շատ մը ազգային-  
ներու և Առաջնորդարանի մէջ ներողութիւն իրենց-  
րելէ ու զգլում՝ յայտնելէ յետոյ, իր ընթացքի  
մասին, Առաջնորդին կողմէ կը վերահաստատուի  
իր պաշտօնին մէջ, ազգ. իշխանութեան յետ այնու-  
հնազանդ մնալու պայմանաւ : Բայց զինք վարժա-  
րան տանող անձնաւորութեանց ներկայութեան  
առաջին առթիւ կը յարձակի իր դասերն ստանձնող  
ուսուցչաց վրայ և կ'արգիլէ ու չթողուր որ աշա-  
կերտները ներողութիւն խնդրեն իրենց անկարգ  
ընթացքին համար և կ'ստ' պատժուին ու այս-  
պէսով կարգ ու կանոնի վերահաստատման նոր դժ-  
ուարութիւններ կը յարուցանէ եւ չափ ու սահման  
մոռնալով իր քինախնդրութեան յազուրդ առլու  
համար աշակերտաց ձեռքով եւ զանազան մի-  
ջոյններով կը ջանայ անտանելի դարձնել նոյն  
ուսուցչաց վիճակը, որոնք եւս այս պարա-  
զաներուն տակ իրենց մուտքը Ե. րդ Զ. րդ եւ  
Է. րդ դասարանները կարելի դարձնելու համար  
կը պահանջեն՝ Ա. անպայմանօրէն արտաք-  
սել վարժարանէն ա՛յն աշակերտները որոնք  
աններելի ընթացքի մէջ զանուած են, ինչպէս ան-  
լուր հայտնութիւն, յարձակում, նախատինք, ա-  
նարգանք եւ այլն) . . . Բ. Ժամանակաւորապէս ար-



տաքսել ա՛յն աշակերտները որոնք / Դ պարզապէս  
կարդապահութեան և այլ անպայմանութեան մէջ  
զանուած են, ինչպէս նախատեսուած է, ու  
սուցիչները դասարան չընդունիլ, և այլն : Պէտք է  
ըսել որ, թէ՛ իսպառ և թէ՛ ժամանակաւորապէս  
արտաքսումը պահանջուած աշակերտներուն թիւը  
12 էն աւելի չէր, Այս պահանջման համաժիտ գրու-  
նուած են թէ՛ Առաջնորդը և թէ՛ ժողովները ու  
զիտակից ժողովուրդին մեծ մասը, բայց մինչեւ  
վերջը զանազան մեքենայութեանց շնորհիւ ու  
տեսչին և կարգ մը անձերու ոտնձգութեանց պատ-  
ճառով կարելի չէ եղած գործադրել ու վարժարա-  
նը դարձաւ ա՛յնպիսի յարկ մը, որ վարժարանէ  
զատ ամէն բանի կը նմանէր : Այս բանը չբաւեր,  
աշակերտները իրենց տեսչին և հսկողներուն քիին  
տակ և անոնց թելադրութեամբ դբամ կը հաւա-  
քեն և հետեւեալ թուուցիկը կը հրատարակեն զոր  
հոս նոյնութեամբ մէջ բերել աւելորդ չենք նկա-  
աեր իբրև նմոյշ մը վիժած մտքի թելադրութեան  
և արդիւնք աշակերտական թունաւորուած մտքի  
արտադրութեան :

1933

Ահաւասիկ այդ անորակելի թուուցիկը բառ առ բառ

**ՅԱՐԳԵԼԻ ԾՆՈՂՆԵՐ**

« — Մեկնք, այսինքն Ազգ. վարժարա-

նի ուսանողներու, պարսականութիւն մը հաւարեցին՝ պահպանելու այն արդարութիւնը, որ ոսկանոյս եղած էր քանի մը զգես ուսուցիչներու եւ ազգայիններու կողմէ :

Ինչպէս զիտե՛ք, դպրոցը միևնույն Մարտ 19 ը, իսադաղ վիճակի մէջ կը գտնուէր. բայց այս տարուան քանի մը զգես ուսուցիչները իրենց անձնական շահերու համար, միացած քանի մը անասնոթ ազգայիններու հետ, իսակաւեցին դպրոցին անդորրութիւնը, տեսին պաշտօնակ ընկերով, որ մեզմէ շատ համակրուած էր :

Բայց արդարութիւնը կարճ ժամանակի մը մէջ տեսին իր պաշտօնին վրայ հաստատեց : Դպրոցը կարգի եկաւ :

Բայց, այն խոնարար ուսուցիչները, դաս աւանդելու չեկան, եւ առաջնորդն ու ազգայիները փոխանակ այս զգեսներուն պաշտօնակ ընկերու, պաշտօնակ ընկեր կ'ուզէն այնպիսի մեկուն որ անբողջ կարողութեամբ աշակերտներուն բարձրութեան համար աշխատած է, եւ անասնոթաբար կըսեն « Տեսույ մը ի գոյս ապաստանը աշակերտներուն՝ կարող կ'ըլլայ քանի մը տարուան մէջ արքեղ սակիչ ամեն ժողով ու ժողովական եւ տեղ կանգնիչ դրութեան » : Ասիկայ

բողոքովին սխալ է, եւ անոնք ինչ ընկերին չգիտնալուն համար այս խօսքերը կ'ըսեն, պարզապէս խոնարարին հակելու համար :

1913 Մարտ 27

(Ստորագր.)

Աշակերտութեան

Մէկ կողմէ այսպէս ուսուցչաց դասարան մտաբեր կ'արդիւնուի, իսկ միւս կողմէ անպաշտօն եւ անպատասխանատու մարդիկ զպրոց երթալով կը սողառնան անոնց, առանց ո՛րեւէ պահանջումի եւ առանց այլ և այլի մտնալ դասարան, իսկ ուսումն. խորհրդոյ հրաժարեալ անդամ Պր Ս. Էթմէքեանն եւ միջամտել կ'ուզէ եւ ուսուցիչները իր մօտ կը հրաւիրէ, բայց բնականաբար կը մերժուի իր այդ անպաշտօն միջամտութիւնը : Այս մերժումն ալ իր կարգին քիչ չէ որ կ'ազդէ յետագայ դէպքերուն վրայ : Այս անկերպարանութեան մէջ Առաջնորդին եւ կարգ մը ազգայնոց զիմուսին վրայ քաղաք. ժողովի անդամութենէ նախապէս հրաժարած Յո. Էֆ Փաշաճեան կը յօժարի եւտ առնել իր հրաժարականը եւ մտնել վարչութեան մէջ տիրող անկարգութեանց վերջ մը տալու բարի դիտաւորութեամբ եւ քաղաք. ժողովը կը վերակազմուի ու կըստանայ իր օրինաւոր մեծամասնութիւնը եւ երեսփ. ժողովը բանի մը ապարդիւն փորձերէ յետոյ, վեր-

Նապէս գումարուելով, Փաշաճեան էֆ. ի վարչութեան անդամակցութիւնը օրինաւոր կը դատէ և զպրոցական խնդրոյն մէջ քաղաք. ժողովոյ հետեւած ուղղութեան իր հաւանութիւնը կը յայտնէ : Այս միջոցին Առաջնորդ և քաղաք. ժողով անգամ մըն ալ կը փորձեն կարգադրել զպրոցական խնդիրը և դիւրացնել ուսուցչաց դատարան մուտքը, որ արդարև դժուար չպիտի ըլլար և սակայն այս անգամ ալ տեսուչը պատճառ կը դառնայ ձախողելուն իր անհաշտ և անմեկնելի ընթացքով ու խնդրոյն կարգադրութեան համար Առաջնորդին հետ յատկապէս վարժարան գացող քաղաք. ժողովի անդամներն և երեսփոխան Յ. Օտապաշեան էֆ. Ե կ'անարգէ վարժարանին մէջ աշակերտաց առջև, և զանոնք չընդունելէ զատ կը մերժէ նաև աշակերտաց նկատմամբ ըլլալիք ս'և է անօրէնութիւն ու կ'առնէ կը. քալէ վարժարանէն : Ու վարժարանը հետըզհետէ թատերավայր մը կը դառնայ անպատմելի խայտառակութեանց, որուն կարելի չըլլար անմիջական դարման մը տանիլ քաղաք. ժողովի անդամներէն միոյն բացակայութեամբ և նոյն ժողովոյնիստ չկարենալ գումարելուն պատճառաւ : Եւ այն մարդը որ իբր տեսուչ զինքը պաշտօնի հրաւիրող Առաջնորդը և ազգ. մարմինները մերժած էր ճանչնալ և անտաստած էր անոնց իր մասին

տուած խիստ օրինաւոր և արդարացի որոշման, այս անգամ ապօրէն կերպով առանց պատճառի և իշխրաւասութեան սահմանէն բոլորովին դուրս ըլլալու պայմանով, կ'ելլայ ինգնազլուխ կը հրաժարեցնէ Առաջնորդին և ուսումն. խորհրդոյ կողմէ պաշտօնի կոչուած վերոյիշեալ չորս ուսուցիչներն ու այս պարագան կը հաղորդէ Առաջնորդին, որ թէև կը զեկուցանէ իրեն թէ այսպիսի կարգադրութիւն մը ընելու ինք իրաւասութիւն չունի, բայց տեսուչը առանձ կարեւորութիւն տալու և առանց նոյն ուսուցչաց հաղորդելու, ուղղակի դատարան առ դատարան կը պատուիրէ աշակերտաց չընդունիլ զանոնք և հետեւեալ օրը տեսչին այս պատուերը իր անխիչական արդիւնքը կ'ունենայ և ուսուցիչներէն երկուքը, տեսչին գաւազանով եւ փայտերով զինուած աշակերտներու յորձակման կ'ենթարկուին ուսուցչանոցին մէջ ու կը զանակոծուին եւ անկողնոյ կը ծառայեն : Տեսուչը այսպէսով իր քինախնդրութեան յագուրդ կուտայ, բայց միւս կողմէ ակնյայտնի այս խայտառակութիւնը պարտկելու համար կ'ելլայ անմտօրէն յերկուրեւ և զբարտեւ թէ՛ ուսուցիչները իր վրայ յարձակած են և աշակեաներն ալ փոխադարձաբար զանոնք զանակոծած : Այս պարագան սակայն ա-

ուսնորդաբանի մէջ ի ներկայութեան պաշտօնական մարմնոյ և զանազան ազգայնոց կատարուած քննութեան մէջ չ'իրնար հաստատել տեսուչը և իրողութիւնը կ'ապացուցուի ու իր բացարձակապէս ստելը յայտնի կ'ըլլայ : Շատ չանցնիր, ուսուցիչները փողոցին մէջ ևս յարձակման կ'ենթարկուին աշակերտաց կողմէ և խնդիրը ուստիկանութեան կը հասնի : Այս ամէնուն վրայ աւելցնենք նաև որ միջոց մը նոյն ուսուցչաց փողոց ելլալն իսկ անկարելի կը դառնայ, 12-15 տարեկան տղոց կողմէ անոնց տուները պաշարման կ'ենթարկուին և հալածանքը սաստկագոյն կերպարանք մը կ'առնէ, որով Ապրիլ 30 ին նիստի հրաւիրուած, բայց դարձեալ մեծամասնութենէ զուրկ գաւառ ընդհանուր ժողովոյ ներկայ եղած 14 երեսփոխաններու հաւանութեամբ, Առաջնորդը իր պատասխանատուութեան տակ առժամապէս կը փակէ վարժարանը, իբր ժամանակաւոր դարման ծայրայեղութեան հասած սոսկալի անկարգութեանց և ի կանխազգշութիւն ամէն հաւանականութեանց : Ու Մայիս 1 ին կը փակուի վարժարանը : Պէտք է ըսել որ մինչև վարժարանին փակումը վերոյիշեալ ուսուցիչները, բացի մանչերու վերին երեք կարգերէն, մնացեալ դասարաններուն և աղջկանց կողմէ ամէն տա-

ժանք ու անտանելիութիւն յանձն առնելով՝ կանոնաւորապէս կ'աւանդեն իրենց դասերը : Այս միջոցին քաղաք ժողովոյ անդամ Մ. Էֆ. Էմիրեան կը վերադառնայ իր ճամբորդութենէն : Քաղաք ժողովը իր մեծամասնութիւնը վերադառնելով նիստ կը դումարէ և մասնաւորապէս վերջին անցուղարձեւումն մէջ տեսչին խաղացած անվայել եւ խառնակչական արարքները նկատի առնելով, վերջնապէս և անդառնալի կերպով կը պաշտօնանկէ զայն՝ իբրև աշակերտութիւնը իր ձեռքով զէնք գործածելով մատաղ սերունդը մահացնող, իբրև գժտութեանց սերմանիչ, իբրև ըմբոստ և ազգակրթական հաստատութեանց մէջ պաշտօնավարելու բացարձակապէս անարժան մէկը : Կորոչէ նաև վարժարանները միջոց մը ևս փակ պահել, իսկ չորս հալածուած ուսուցիչներուն թոշակները վրձարելով ազատ կացուցանել զիրենք ու զերծ մնալ ամէն պատասխանատուութենէ : Տեսչին նկատմամբ տրուած որոշումը պաշտօնազրոյցով մը կը հաշորդուի իրեն, որ առաջին անգամ առանց բանալու կը վերադարձնէ, իսկ երկրորդ անգամին՝ Նշան Խաչեանի հետ կը զրկուի, այս անգամ կը բացուի, կը կարգացուի և դարձեալ նոյն պահարանին մէջ դրուելով կը վերադարձուի :

Սերովբէ վարդապետ Սամուէլեան, զորկ վարչական կարողութենէ, զորկ նաև կարողէ և յեղյեղուկ բնաւորութեան տէր, թոյլ և անհաստատամիտ մէկը փոխանակ օրէնքին տրամադրութեանց հետեւելու, կանապ մի քանի մարդոյ թելադրութեան և Մայիս 12 ին՝ 29 զանազան ազգայիններ առաջնորդարան կը հրաւիէ իբր թէ՛ խորհրդակցելու և համերաշխութիւն մը գոյացնելու։ Սերովբէ վարդապետի այս բրածը խոշոր փխալ մըն էր և իրերը աւելի պիտի կնճռոտէին, որով հետեւ խնդիրը եթէ դպրոցին շուրջ էր, հոն կար ապեկար և ըմբոստ պաշտօնեայ մը, իրեն գործած խելագարի արարքներով, զոր անպատիժ թողուլը ոճիր մըն էր։ Արդեօք համերաշխութիւն գոյացուելով ապեկար մը ապեկար ըլլալէ պիտի դադրէ՞ր։ Արդէն հազիւ քանի մը ժամ կ'անցնի, դէպքերը ցոյց կուտան թէ համերաշխութեան գալու անուան տակ խողցուած այդ խաղը ինչ էր խկապէս, ինչպէս իվերջոյ բացորոշապէս երեւցաւ աւրէն թէ ինչ էր տեւի և դպրոցի խնդիր յուզողներուն էական ձգտումը։

Նոյն միջոցին վաղօրէք պրասարաստուած անձեր առաջնորդարան կը խուժեն, կը բռնաստոր անոր վրայ եւ ստիպման տակ Առաջնորդին

պատրաստել կուտան քաղաք. ժողովին հրածարեցուցման եւ այլն ինչ ինչ խնդիրներու վերաբերեալ ապօրինի եւ անիմաստ թուղթ մը, ու ապա կը ցրուին։ Առաջնորդը այս անկարգութիւններէն և ճնշումէ կ'ուշաթաբուի։ Իժիշկ կը բերուի ու միւս օրը վաճաք կը փոխադրուի ուր կը մնայ ութ օր։ Առաջնորդին բացակայութեան, ինչպէս անկէ առաջ ալ, քանիցս գումարուած երեսփ. ժողովը մեծամասնութիւն չէ կրցած ունենալ պարզապէս գործուած մեքենայութեանց պատճառաւ։ Մենք կը յիշենք հոս մէկ երկու պարագայ և կը թողունք ժողովուրդին գատատանին։ Այսպէս. վերանա գիւղի Տ. Ներսէս Փափագեան քահանան գիւղէն երկու անգամ ժողովի եկած և վարը դրուելով չէ թոյլ տրուած մասնակցելու։ Վ. Մարանեան էֆ. նիստի եկած և քառորդէ մը աւելի նստելէ յետոյ առանց ներկայութիւնը ստորապրելու մեկնած է հակառակ եղած պնդման ու ժողովը ամլութեան գատապարտած է։ Այս փիւնոյն անձը երկրորդ նիստի մը հրաւիրուած պահուն դարձեալ մերժած է գալ, իսկ նոյն պահուն Խ. Չոլարեանի տան մէջ իր քովը գանուող Պր. Ս. Էթմէքեան պուսպած է « յպիսի գայ, յպիսի գայ, յպիսի գայ. տէ՛ ժողովը րե՛ք նայի՛ւն. »

Ահա թէ օրինակութեան անունով եղած պուշտօքները որքան կեղծ և այն անբաստանութիւնները թէ դիւմամբ ժողով չզումարուիր որքան անիրաւ էին :

Արտաքննապէս ժողովուրդին և օրինականութեան անունով խօսիլ, իսկ ներքնապէս դաւերով և մեքենայութիւններով նոյն այդ օրէնքը հարուածել և ժողովուրդը շահագործել միմիայն կիրքի և քրմահաճոյքի յագուրդ տալու հաճար, այնպիսի խորիմաստ գործերակերպ մըն է, որուն գժբախտաբար ամբողջապէս դեռ չէ վերահասու եղած մեր ժողովուրդը :

Մայիս 24 ին, կրկին երեսփ. ժողովը կը զումարուի և օրինականութեան անունով խօսողներ՝ կարգապահութեան համար ոստիկան հրաւիրելը կ'արդիւնէ՝ որպէսզի կարենան պէտք եղած և ծրագրուած ձևով անկարգութիւն յառաջ բերել ու կը խուժեն առաջնորդարան : Երեսփոխաններէն ոմանք կը խոշտանգեն, Առաջնորդը բռնի կը հեռացնեն, քարտուղարը միջոց մը զէւանատան մէջ կը բանտարկեն, ու ապա կը գանակոծեն և բոլոր սենեակներուն բանալիները գրաւելէ յետոյ այնտեղ կը տեղադրուին մի քանի մարդիկ իբրև օրինաւոր մարմին, Առաջնորդա-

կան փոխանորդ նշանակելով հոն իրենց ընկերացող Շիղա Քհ. Զիւլալեան եւ անոր օգնական կարտուղար տալով Վահրիճ Քհյ. Տէր Բենիամինեանը : Յաջորդ օրը, Առաջնորդը չ'մեկնած, այս ինքնակոչ փոխանորդին տեղ՝ իբր թէ օրինականութիւնը յարգած ըլլալու համար՝ փոխանորդ նշանակել կը արուի Վահրիճ քահանան : Հոս կարեոր է յիշել թէ՛ այս քահանան դեռ 3 - 4 օր առաջ օրինաւորապէս խառն ժողովոյ կողմէ փոխանորդ ընտրուած և Առաջնորդին կողմէ հաստատուած ըլլալուն հակառակ՝ 2 - 3 օր միայն նոյն պաշտօնը վարելէ յետոյ, գրաւորապէս և անգառնալի կերպով հրաժարած էր, գործերը վարելու իր բացարձակ անկարողութիւնը յայտնելով : Ահա քահանայ մը որ օրէնքի սահմանին մէջ իրեն տրուած պաշտօն մը կը մերժէ վարել իսկ յետոյ կ'ընդունի զայն առանց այլ և այլի, մէկ օրէն միւսը հրաջիւք իմն կարծես կարողութիւն մը զգալով իր մէջ : Աւելորդ է ըսել թէ՛ այս խրտուիլակ փոխանորդը՝ ուղղակի հլու գործիք կը դառնայ Առաջնորդարանի մէջ տեղադրուողներուն ձեռքը և իր կողմէ անոնց « լիազոր խորհրդակցական յանձնաժողով », տնտեսը կուտայ ու իբր թէ՛ կը վերաբանայ դպրոցները մինչև Յունիս 20 բաց պահելու

առաջագրութեամբ, բայց 500 է աւելի աշակերտներէն 50 և ըստ ոմանց 70-74 աշակերտ կը յաճախեն և Յունիս 14 ին կը փակուի : Երկիցս պաշտօնանկուած տեսուչը կը վերահաստատեն իր պաշտօնին մէջ. իսկ հալածուած չորս ուսուցիչները կ'արդիւնեն վարժարան յաճախելէ և ոչ իսկ ամենադոյզն կարգադրութիւն մը կ'ընեն այն մի քանի աշակերտներուն նկատմամբ, որոնք տակն ու վրայ ըրած էին վարժարանը ու անգիտակից մանուկներու մէջ կ'ամրայնեն այն համոզումը թէ՛ իսկապէս օրինական էր իրենց անվայել ընթացքը, թէ՛ գնահատելի էր իրենց խայտառակ արարքը և թէ՛ արգարեւ իրենք են տէրն ու տնօրինողը դպրոցին, ինչպէս որ իրենց թռուցիկով յայտարարած էին :

Այս քանով ալ չգոհանար փոխանորդ քահանան : Առաջնորդին մեկնելէն առաջ, Մայիս 25 ին քաղաք. ժողովէն կը հրաժարի Յ. Փաշաճեան Է.Ֆ. զգուած և սրամտած գործուած բռնական ապօրինի և ստորին արարքներէն : Յետոյ սակայն, Առաջնորդին մեկնումով, երբ վերահասու կ'ըլլայ թէ՛ ազգ. գործերը բոլորովին քառասյին վիճակ մը պիտի ստանան, բարի նախանձախընդրութեամբ մը կը փութայ նոր զրոյ մը իր հրաժարականը ետ պահանջել փոխանորդէն, բայց այս

վերջինը, արդէն ամէն ապօրինութիւն գործելու տրամադիր, կը մերժէ հրաժարականը վերադարձնել, կը մերժէ օրինաւորապէս ընտրուած քաղաք. ժողովը ձանչնալ և կը մնայ խաղալիկ զինք շրջապատողներուն ձեռքը և ուղղակի կամ անուղղակի պատճառ կ'ըլլայ այն ոճիրին որ գաղտագողի և վատօրէն կը գործուի Յ. Փաշաճեան Է.Ֆ. ի վրայ անգիտակից ոչլրմելի մը կողմէ, անոր համար որ Փաշաճեան Է.Ֆ. առանց անսարու կանխաւ եղած սպառնալիքներուն վերջին պահուն գերագոյն զոհողութիւնն ըրած էր դառնալով իր պաշտօնին անձնուիրաբար : Ու այսպէսով դպրոց և առաջնորդարան կը մնան այն մարդոց ձեռքը, որոնք 2-3 տարիէ ի վեր այդ մարմաշով կը սուշորուէին :

Եւ մարդիկ որոնք գեռ երէկ ժողովուրդի և օրէնքի անունով, իբր թէ օրինաւորապէս ընտրուած չորս երեսփոխաններու անպայման վաւերացումը կը պահանջէին, այս օր ինչ հեքնութիւն, իբր ապօրէն ընտրութիւն բեկանած և նոր ընտրութեան ձեռնարկած են : Մենք այս կէտն ալ կը նօթենք ու կ'անցնինք : Համերաչխութեան և յգ. շահերու անունով պուստոյ այս պարոններէն շատերը մէկ տարիէ ի վեր ազգ.

գործերու մէջ զանազան պաշտօններու հրատիրուած են, բայց մերժած ու չեն ընդունած, և միանգամայն չեն ալ դադարած գանդատելէ ու խառնակելէ: Մարդոց նպատակն է եղբր բացարձակապէս և ինքնիշխան տէրը դառնալ ազգ. գործերուն: Իրենցմէ մէկը միայն քարեհաճոքիւնն ունեցաւ ուսումն. խոփուրդին մէջ մտնելու, թէև գանդատ և զբաւոր բողոք ալ կար իր մասին թէ՛ զրկուած էր ազգ. իրաւունքէ, և իր ուրիշ մէկ անգամակցին հետ, ուղղակի պատճառ դարձաւ դպրոցներու խանգարման, աշակերտներուն բարոյապէս և ուսումնապէս փճացումին և ազգ. գործերու տակնուվրայութեան: Ո՞վ էր տեսեր որ սահմանադրական ժողովի մը մէջ փոքրամասնութեան՝ այսինքն հինգ անդամէն երկուքին քրմաճոյքը կատարուի: Ո՞վ էր տեսեր որ ապիկար եւ անկարող տեսուչ մը պաշտպանուի: Ո՞վ էր տեսեր որ, կիրքի, քրմահաճոյքի, անձնական և կուսակցական հաշիւներու համար, աշակերտութիւնը իբր զէնք գործածուի: Բայց յաջողելու և ամէն զնով յաջողելու համար, ամէն միջոց ներելի է եղբր և ոչ մէկ նուիրականութիւն արժէք չունի եղբր ասոնց համար: Այս միեւնոյն ուղղութեան հետեւեցան նաեւ քաղաք. ժողովի ան երկու ան-

դամները, որոնք օրէնք, խիղճ, ազգ. Սահմանագրութիւն, դպրոց և ազգ. մանկտիին օգուտը ուզեցին զոհել ուղղակի իրենց եսին իրենց սինքրմայաճոյքին: Ահա առաջին և զլիւաւոր պատասխանատուները այս բովանդակ տակն ու վրայութիւններուն: Ոչ նուազ պատասխանատու է նաև Առաջնորդը Սերովբէ վարդապետ, որ իր թոյլ անկորով և տատամտաւ ընաւորութեամբ ու անվարչազիտութեամբ, ասպարէզ տուաւ որ անպատասխանատու անձեր հարուածեն ամեն նուիրականութիւն և ազգ. Սահմանագրութիւն: Պատասխանատուութեան բաժին մըն ալ ունի Տգթ. Ն. Տաղաւարեան որ Գարեգին Յովհաննէսեան - Առապածեանի պէս մէկը իբրև տեսուչ կը յանձնարարէ Տրապիզոնի վարժարաններուն, մէկը որ անցեալ տարի Իզմիտի Կէյլէ - Էջմէ գիւղը յօժարած է երթալ, բայց չեն տարած:

Մենք դեռ չենք ուզեր յիշել Նշան Խաչեանի, Իսկական Կրճեկեանի (տիրացու) Գարեգին Կողիկեանի, և տակաւին հեռուէն կամ մօտէն այս խնդրոյն մէջ դեր ունեցող պատասխանատուներուն անունները: Եւ իրերը ու ամբողջ անցուդարձը, անաչառ կէ պով ու մանրամասնօրէն կը ներկայացնենք ժողովուրդին դատաստանին, ժողովուր-

գին՝ որ միշտ մթութեան մէջ պահել և սուտերով  
ու յերկրանքներով խաբելը ա՛նքան ալ գիւրին  
չէ :



« Ազգային գրադարան



NL0239067

51.865